ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2015 թվականի N 334-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 314-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշման N 1 հավելվածի 91-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի N 7 հիմնական դպրոց>>, <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>>, <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց>>, <<Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>>, <<Պառոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց>> և <<Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացված ներքին աուդիտի արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *Լ. Նահապետյանին.*

1) <<Աբովյանի N 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 276988 *(երկու հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր ութսունութ)* ՀՀ դրամը:

2) <<Բյուրեղավանի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 240008 *(երկու հարյուր քառասուն հազար ութ)* ՀՀ դրամը:

3) <<Արգելի Վ. Անանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին

որպես դրամաշնորհ ավել հատկացված 14874 *(չորսհազար ութհարյուր յոթանասունչորս)* ՀՀ դրամը:

4) <<Զարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 326256 *(երեք հարյուր քսանվեց հազար երկու հարյուր հիսունվեց)* ՀՀ դրամը:

5) <<Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 664000 *(վեց հարյուր վաթսունչորս հազար)* ՀՀ դրամը:

6) <<Եղվարդի Համլետ Թադևոսյանի անվան N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 216922 *(երկու հարյուր տասնվեց հազար ինը հարյուր քսաներկու)* ՀՀ դրամը:

7) <<Պռոշյանի Պ. Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 177696 *(մեկ հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր իննսունվեց)* ՀՀ դրամը:

8) <<Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ֆինանսավորման ծավալներից նվազեցնել 2013 թվականին որպես դրամաշնորհ ավել հատկացված 300000 *(երեք հարյուր հազար)* ՀՀ դրամը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար ***Լ. Պետրոսյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 15
ք. Հրազդան